

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32/8

9 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Վահե Գևորգյան Ա/Ձ-ի 18.11.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի ժ/պ 19.09.2014 թ-ի թիվ 1288 որոշման դեմ:

Վահե Գևորգյանի գանգատում բերված փաստարկները.

Համաձայն հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 1288 որոշման, ա/ձ Վահե Գևորգյանից ենթակա է բռնագանձման 371388 դրամ պարտադիր սոցիալական վճար:

Վերոհիշյալ պարտավորությունը 2009 թ-ի հունվարից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների համար հաշվարկված, նվազագույն սոցիալական վճարների գումարն է:

Վահե Գևորգյանը հանդիսացել է անհատ ձեռնարկատեր 21.02.2005 թ-ին ստացել է թիվ 282.07729 պետական գրանցումը, որից հետո գործունեություն չի ծավալել և հաշվետվություններ չի ներկայացրել:

Վահե Գևորգյանը չի ընդունում հիշյալ պարտավորությունը հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2005 թ-ի նոյեմբերի 11-ին ընդունվել է «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» թիվ ՀՕ-215-Ն օրենքը: Հիշյալ օրենքի 1-ին հոդվածը սահմանում է՝ սույն օրենքը տարածվում է միայն եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների վճարման հետ կապված պարտավորություններ անեցող անհատ ձեռնարկատերերի վրա:

Օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է՝ մինչև 2006 թ-ի մայիսի 1-ը հարկային մարմին գործունեությունը դադարեցնելու (լուծարվելու) վերաբերյալ գրավոր դիմում ներկայացրած (այդ թվում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագրերի հիման վրա) և պետական գրանցման վկայականը (այդ թվում՝ ժամկետային) հանձնած անհատ ձեռնարկատերերն ազատվում են 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից:

Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի ցանկերը (2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների պարտադիր նշումով) հարկային տեսչությունները մինչև 2006 թվականի սեպտեմբերի 1-ը ներկայացնում են պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ՝ մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, նրանց վկայականներն անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար:

Վերլուծելով օրենքի հիշյալ դրույթները հարկային տեսչությունը պետք է կիրառեր արտոնություն և ընդգրկեր պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ ուղարկվող՝ պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու մասին ցանկերում: Բացի այդ, հարկային տեսչությունը չի կիրառել «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին» ՀՀ 2008 թ-ի օգոստոսի 21-ի ՀՕ- 151-Ն օրենքը: Մասնավորապես, 1-ին հոդվածը սահմանում է՝

«Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ 2005 թ-ի նոյեմբերի 11-ի ՀՕ-215-Ն օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված արտոնություններից օգտվելու իրավունք ունեցող անհատ ձեռնարկատերերը, որոնք մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դեռևս չեն օգտվել այդ արտոնություններից, կարող են օգտվել Օրենքով իրենց վերապահված արտոնություններից՝ առանց ժամկետային սահմանափակման:

Հարկային տեսչության կողմից «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ 2005 թ-ի նոյեմբերի 11-ի ՀՕ-215-Ն և «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին» ՀՀ 2008 թ-ի օգոստոսի 21-ի ՀՕ- 151-Ն օրենքները չկիրառելու պայմաններում, հարկային մարմինը անբարենպաստ իրավիճակ է ստեղծել, որով գանգատաբերի նկատմամբ սահմանել է ոչ իրավաչափ պարտականություն:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71-րդ 63-րդ հոդվածները, Վահե Գևորգյան Ա/Ձ-ն խնդրում է անվավեր ճանաչել 19.09.2014 թ-ի թիվ 1288 որոշումը և որպես հետևանք անձնական հաշվի քարտում կատարել վերահաշվարկ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Նոր Նորքի ՀՏ պետի ժ/պ-ն քննարկելով Վահե Գևորգյան ԱՁ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 19.09.2014 թ-ի դրությամբ Վահե Գևորգյան Ա/Ձ-ի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 371.388 դրամ, որից պարտադիր սոցիալական ապահովության վճար 371.388 դրամ (2009թ. հունվարից 2012թ-ի դեկտեմբեր ամիսների հաշվարկ և հաշվարկված տույժեր), որը ենթակա է գանձման: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի ժ/պ կողմից 19.09.2014 թ-ին ընդունել է թիվ 1288 որոշումը՝ Վահե Գևորգյան ԱՁ-ից 371.388 դրամ գանձելու վերաբերյալ:

Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.

2005 թ-ի նոյեմբերի 11-ին «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» թիվ ՀՕ-215-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի համաձայն. «Մինչև 2006 թվականի մայիսի 1-ը հարկային մարմին գործունեությունը դադարեցնելու (լուծարվելու) վերաբերյալ գրավոր դիմում ներկայացրած (այդ թվում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագրերի հիման վրա) և պետական գրանցման վկայականը (այդ թվում՝ ժամկետային) հանձնած անհատ ձեռնարկատերերն ազատվում են 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից»:

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «2006 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի մայիսի 1-ը 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների 30 տոկոսը վճարած անհատ ձեռնարկատերերն ազատվում են եկամտահարկի նվազագույն գումարների և դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների

չվճարված պարտավորությունների (այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի) վճարումից»:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներում չնշված անհատ ձեռնարկատերերն ազատվում են 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից (բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված դեպքի):

Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի կողմից 2006 թվականի հունվարի 1-ից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներ չեն հաշվարկվում (չեն վճարվում):

Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի ցանկերը (2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների պարտադիր նշումով) հարկային տեսչությունները մինչև 2006 թվականի սեպտեմբերի 1-ը ներկայացնում են պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ՝ մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, նրանց վկայականները անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Վահե Գևորգյանը հարկային մարմնում հաշվառման կանգնելու պահից որևէ գործունեություն չի իրականացնել, հաշվետվություններ չի ներկայացրել, չի ունեցել չկատարված այլ պարտավորություններ, հետևապես ղեկավարվելով Օրենքի 4-րդ հոդվածի դրույթներով հաշվառման վայրի հարկային տեսչության կողմից մինչև 2006 թվականի սեպտեմբերի 1-ը գանգատաբերի վերաբերյալ տվյալները պետք է ներառվեին համապատասխան ցանկերում և ներկայացվեին պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, նրա վկայականն անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար, ինչը, սակայն, չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի ժ/պ 19.09.2014 թ. թիվ 1288 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝

